

Ֆինանսական հաշվետվություններ և  
անկախ արդիտորի եզրակացություն

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ունիվերսալ  
վարկային կազմակերպություն փակ  
բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2015թ.

## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

## Անկախ ատղիտորի եզրակացություն

Գրասր թորթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երեւան 0012  
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan str.  
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

[www.grantthornton.am](http://www.grantthornton.am)

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը.

Մեր կողմից իրականացվել է «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ֆինանսական հաշվետվությունների ատղիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Ատղիտորի պատասխանատվություն*

Մենք պատասխանատու ենք ատղիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված ատղիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է ատղիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Ատղիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող

փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ուսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են մաս կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես մաս ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԳՈՒԴԿԸԳԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Գագիկ Գյուլբուդադյան  
Տնօրեն-բաժնետեր



Չարուհի Ղարիբյան  
Աուդիտի ղեկավար



Գրանք Թորնթոն ՓԲԸ  
19 մայիսի, 2016թ.  
ք. Երևան



## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ		2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
	Ծանոթ.		
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	268,758	189,428
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(62,066)	(11,867)
<b>Զուտ տոկոսային եկամուտներ</b>		<b>206,692</b>	<b>177,561</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	1,659	690
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,353)	(4)
<b>Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>		<b>306</b>	<b>686</b>
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ վնաս		(2,029)	(230)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումներից վնաս		(7,473)	(5,635)
Այլ եկամուտներ	8	27,000	22,457
Արժեզրկման ծախս	9	(49,157)	(23,913)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(170,321)	(97,116)
Հիմնական միջոցների մաշվածություն	15	(8,037)	(4,590)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	16	(764)	(547)
Այլ ծախսեր	11	(144,448)	(50,399)
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկումը</b>		<b>(148,231)</b>	<b>18,274</b>
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	12	27,796	(5,854)
<b>Տարվա շահույթ/(վնաս)</b>		<b>(120,435)</b>	<b>12,420</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>(120,435)</b>	<b>12,420</b>

7-ից 43 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	70,385	5,924
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14	878,591	484,362
Հիմնական միջոցներ	15	63,330	12,211
Ոչ նյութական ակտիվներ	16	13,691	3,401
Հետաձգված հարկային ակտիվ	12	24,737	-
Կանխավճարներ շահութահարկի գծով		6,482	6,482
Այլ ակտիվներ	17	5,492	6,094
<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>1,062,708</b>	<b>518,474</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
<b>Պարտավորություններ</b>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	691,655	38,415
Փոխառություններ	19	-	25,718
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	3,059
Այլ պարտավորություններ	20	54,570	14,364
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>		<b>746,225</b>	<b>81,556</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ	21	420,000	420,000
Գլխավոր պահուստ		8,167	7,546
Լրացուցիչ կապիտալ	21.1	20,938	20,938
Կուտակված վնաս		(132,622)	(11,566)
<b>Ընդամենը՝ սեփական կապիտալ</b>		<b>316,483</b>	<b>436,918</b>
<b>Ընդամենը՝ սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>1,062,708</b>	<b>518,474</b>

Ֆինանսական հաշվետվությունները, ներկայացված 3-ից 43 էջերում հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2016թ. մայիսի 19-ին և ստորագրվել են Կազմակերպության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Արտաշես Տոնոյան  
Գործադիր տնօրեն



Մարինե Դարբինյան  
Գլխավոր հաշվապահ



7-ից 43 էջերում ներկայացված ծանոթությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:



## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Գլխավոր պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
<b>2014թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	420,000	20,938	7,233	(23,673)	424,498
Հատկացում պահուստին	-	-	313	(313)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	313	(313)	-
Տարվա շահույթ	-	-	-	12,420	12,420
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	12,420	12,420
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>420,000</b>	<b>20,938</b>	<b>7,546</b>	<b>(11,566)</b>	<b>436,918</b>
Հատկացում պահուստին	-	-	621	(621)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	621	(621)	-
Տարվա վնաս	-	-	-	(120,435)	(120,435)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(120,435)	(120,435)
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>420,000</b>	<b>20,938</b>	<b>8,167</b>	<b>(132,622)</b>	<b>316,483</b>

7-ից 43 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(148,231)	18,274
<i>Ճշգրտումներ</i>	-	-
Արժեզրկման ծախս	49,157	23,913
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	8,801	5,137
Վաճառքի համար պահվող ակտիվների արժեզրկում	-	3,788
Ստացված տոկոսներ	(6,977)	(7,796)
Վճարված տոկոսներ	58,574	1,980
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից վնաս	7,473	5,635
<b>Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները (Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</b>	<b>(31,203)</b>	<b>50,931</b>
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(434,548)	48,764
Այլ ակտիվներ	(964)	(3,019)
<i>Չուտ ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	40,329	(1,390)
<b>Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>(426,386)</b>	<b>95,286</b>
Վճարված շահութահարկ	-	-
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(426,386)</b>	<b>95,286</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>	<b>-</b>	<b>-</b>
Հիմնական միջոցների առք	(59,156)	(2,385)
Ոչ նյութական ակտիվների առք	(11,054)	-
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(70,210)</b>	<b>(2,385)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>	<b>-</b>	<b>-</b>
Ֆինանս. և այլ կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների ստացում/(մարում)	560,082	(97,558)
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ աճ/(նվազում) դրամական հոսքեր</b>	<b>560,082</b>	<b>(97,558)</b>
	-	-
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</b>	<b>63,486</b>	<b>(4,657)</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	5,924	10,568
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	975	13
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 13)</b>	<b>70,385</b>	<b>5,924</b>
<b>Լրացուցիչ տեղեկատվություն</b>		
Ստացված տոկոսներ	261,781	189,567
Վճարված տոկոսներ	(3,492)	(13,124)

7-ից 43 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:



# Ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2007 թվականին «Ավանգարդ Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ անվամբ և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 4 դեկտեմբերի 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N21 արտոնագրային համարով և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

2015թ-ի ապրիլ ամսվանից Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «4finance Holding S.A.» միջազգային ֆինանսական կազմակերպությունը:

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և փոքր առևտրային, սպառողական և գյուղատնտեսական վարկերի տրամադրումն է:

Կազմակերպության գրասենյակը և թվով 1 մասնաճյուղը գտնվում են Երևանում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Կ. Ուլենցու փողոց 58/1:

## 2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Կազմակերպության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Կազմակերպության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

### **3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները**

#### **3.1 Համապատասխանությունը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

#### **3.2 Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

#### **3.3 Գործառնական և ներկայացման արժույթ**

Կազմակերպության գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Կազմակերպությունը: Կազմակերպության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը: Կազմակերպությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Կազմակերպության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

#### **3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ**

Ընթացիկ տարում Կազմակերպությունը առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2015թ-ին՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Կազմակերպության տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Սահմանված հատուցումների պլաններ՝ աշխատակիցների վճարներ (ՀՀՄՍ 19 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 2010-2012թթ. տարեկան բարեփոխումներ*
- *ՖՀՄՍ 2011-2013թթ. տարեկան բարեփոխումներ*

### **3.5 Կազմակերպության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ**

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Կազմակերպության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

#### ***ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)***

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:

Կազմակերպության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

#### ***ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ***

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ»*, *ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»*, և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարրեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները, բարեփոխումները հավանաբար նշանակալի ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄ 14 հաշիվների կանոնավոր հետաձգում*
- *Համատեղ գործողություններում տոկոսների ձեռքբերման հաշվառում*
- *Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում (ՀՀՄՄ 38 և ՀՀՄՄ 16 փոփոխություններ)*
- *Առանձին ֆինանսական հաշվետվություններում սեփական կապիտալի մեթոդը (ՀՀՄՄ 27 փոփոխություններ)*
- *Ակտիվների ներդրման վաճառք ներդրողի և դրա ասոցացված կազմակերպության կամ դրա համատեղ ձեռնարկության միջև (ՀՖՄՄ 10 և ՀՀՄՄ 28 փոփոխություններ)*
- *2012-2014թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով*
- *Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը (ՖՀՄՄ 10, ՖՀՄՄ 12 և ՀՀՄՄ 28 փոփոխություններ)*
- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)*

#### **4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

##### **4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

##### *Տոկոսային եկամուտներ և ծախսեր*

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

##### *Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր*

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման,

Ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

#### *Ջուտ առևտրային եկամուտ*

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Ջուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից գուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

#### **4.2 Արտարժույթ**

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության գուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության գուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից գուտ եկամուտ տողում:

Կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբեր 2015թ.	31 դեկտեմբեր 2014թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	483.75	474.97
ՀՀ դրամ/1 Եվրո	528.69	577.47

### 4.3 Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բառառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում վճարում է նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

#### 4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոզիտային գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հեշտությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

#### 4.5 Պահանջներ բանկերի նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը օգտագործում է բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերում տեղաբաշխված ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Կազմակերպության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում:

#### 4.6 Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,

### *Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ*

Ֆիքսված մարման ժամկետով ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Կազմակերպության հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Կազմակերպության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

### *Վարկեր և դեբիտորական պարտքեր*

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսային փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից պահուստների գումարները:

## **4.7 Ֆինանսական ակտիվների արժեզրկում**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվով Կազմակերպությունը իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

### *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:



Արժեզրկումից կորուստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառու կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, գուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Կազմակերպությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի մմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Կազմակերպությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Կազմակերպությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում պարտքային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Կազմակերպության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Կազմակերպությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեքից մասնաժամանակաբաժնի կամ նվազում է արժեքից մասնաժամանակաբաժնից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեքից մասնաժամանակաբաժնի կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեքից մասնաժամանակաբաժնի պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Կազմակերպությունը չի կարող կանխատեսել ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեքից մասնաժամանակաբաժնի ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

#### **4.8 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում**

##### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Կազմակերպությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Կազմակերպությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Կազմակերպությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում Կազմակերպության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Կազմակերպության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով

օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Կազմակերպությունը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

**Ֆինանսական պարտավորություններ**

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**4.9 Վարձակալություն**

*Գործառնական վարձակալություն – Կազմակերպությունը որպես վարձակալ*

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

**4.10 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	4	25
Գույք և գրասենյակային միջոցներ	1-5	20-100
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով՝ վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ

այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

#### **4.11 Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և այլ ոչ նյութական ակտիվներից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 12 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

#### **4.12 Վաճառքի համար պահվող ակտիվներ**

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

#### **4.13 Փոխառություններ**

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

#### 4.14 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Կազմակերպությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

#### 4.15 Բաժնետիրական կապիտալ

##### *Բաժնետիրական կապիտալ*

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելվածար:

##### *Չբաշխված շահույթ*

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

##### *Լրացուցիչ կապիտալ*

Բաժնետիրոջ կողմից ներգրավված փոխառության իրական և անվանական արժեքների տարբերությունը ճանաչվում է կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ:

##### *Շահաբաժիններ*

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

#### 4.16 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՄ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Կազմակերպության առևտրային գործունեությունը:

#### 5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և

պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև.

#### *Կապակցված կողմերի հետ գործառնություններ*

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Կազմակերպությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 23):

#### *Իրական արժեքի չափումը*

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 24):

#### *Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ*

Կազմակերպությունը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Կազմակերպությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

**Հարկային օրենսդրություն**

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 22 ծանոթագրությունը:

Կազմակերպության ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

**6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր**

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	265,666	186,129
Անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսներ	2,934	3,000
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	158	299
<b>Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ</b>	<b>268,758</b>	<b>189,428</b>
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	28,058	3,587
Փոխառություններ	34,008	8,280
<b>Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր</b>	<b>62,066</b>	<b>11,867</b>

**7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր**

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Գործակալական միջնորդավճարներ	1,659	690
<b>Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</b>	<b>1,659</b>	<b>690</b>
Բանկային ծառայություններ	1,353	4
<b>Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</b>	<b>1,353</b>	<b>4</b>

**8 Այլ եկամուտ**

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Տույժերից և տուգանքներից եկամուտ	25,260	22,083
Այլ եկամուտներ	1,740	374
<b>Ընդամենը այլ եկամուտ</b>	<b>27,000</b>	<b>22,457</b>

## 9 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 14)	47,591	22,704
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 17)	1,566	1,209
<b>Ընդամենը արժեզրկման ծախս</b>	<b>49,157</b>	<b>23,913</b>

## 10 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ Այլ ծախսեր	165,910 4,411	97,007 109
<b>Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր</b>	<b>170,321</b>	<b>97,116</b>

## 11 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	16,614	4,476
Գովազդի ծախսեր	32,959	350
Գործուղման ծախսեր	7,727	2,564
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	6,376	3,918
Վարձակալության գծով ծախսեր	18,934	12,658
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	1,311	1,038
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	19,322	8,859
Ներկայացուցչական ծախսեր	4,241	949
Հասարակական կապերի գծով ծախսեր	270	250
Գրասենյակային ծախսեր	9,064	3,351
Անդամավճարներ	1,556	1,417
Ապահովագրության գծով ծախսեր	1,452	629
Վաճառքի համար պահվող ակտիվների արժեզրկումից կորուստներ	-	3,788
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	20,075	5,045
Այլ ծախսեր	4,547	1,107
<b>Ընդամենը այլ ծախսեր</b>	<b>144,448</b>	<b>50,399</b>

## 12 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Հետաձգված հարկ	(27,796)	5,854
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)</b>	<b>(27,796)</b>	<b>5,854</b>

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): 2015թ. ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց



հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի/(փոխհատուցման) և հաշվապահական շահույթի/(վնասի) միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ դրույքաչափ (%)		2014	Արդյունավետ դրույքաչափ (%)
	2015			
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկումը</b>	<b>(148,231)</b>		18,274	
Շահութահարկ 20% դրույքաչափով	(29,646)	(20)	3,655	20
Չնվազեցվող ծախսեր	355	-	1,072	6
Բացասական փոխարժեքային տարբերություն	1,495	1	1,127	6
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)</b>	<b>(27,796)</b>	<b>(19)</b>	<b>5,854</b>	<b>32</b>

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Այլ պարտավորություններ	1,909	2,508
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	-	1,279	1,279
Հիմնական միջոցներ	166	(166)	-
Կուտակված հարկային վնաս*	847	20,425	21,272
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>2,922</b>	<b>24,046</b>	<b>26,968</b>
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(545)	545	-
Հիմնական միջոցներ	-	(1,950)	(1,950)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և փոխառություններ	(31)	(126)	(157)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(5,405)	5,281	(124)
<b>Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն</b>	<b>(5,981)</b>	<b>3,750</b>	<b>(2,231)</b>
<b>Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(3,059)</b>	<b>27,796</b>	<b>24,737</b>

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	1,427	482	1,909
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	93	(93)	-
Հիմնական միջոցներ	102	64	166
Կուտակված հարկային վնաս	6,471	(5,624)	847
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	8,093	(5,171)	2,922
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	(545)	(545)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և փոխառություններ	(5,262)	(143)	(5,405)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(36)	5	(31)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(5,298)	(683)	(5,981)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	2,795	(5,854)	(3,059)

\*Ղեկավարության գնահատմամբ Կազմակերպությունը հարկային վնասների գոյացմանը հաջորդող 5 տարիների ընթացքում կունենա բավարար հարկվող շահույթ փոխանցվող հարկային վնասն օգտագործելու համար:

### 13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	105	795
Բանկային հաշիվներ	70,280	5,129
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>70,385</b>	<b>5,924</b>

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 53,999 հազար դրամ գումարով (77%) հաշիվը կենտրոնացված է մեկ բանկում, ինչն իրենից ներկայացնում է էական կենտրոնացում (2014թ. Կազմակերպությունն ուներ հաշիվներ երկու ՀՀ բանկերում):

### 14 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	907,375	498,412
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների զօնվ	(28,784)	(14,050)
<b>Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>	<b>878,591</b>	<b>484,362</b>

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսագումարը կազմում է 14,773 հազար դրամ (2014թ. 7,796 հազար դրամ):

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 63.26% ՀՀ դրամով վարկերի համար (2014թ.՝ 48.88%): 2015թ. դեկտեմբերի 31 դրությամբ ԱՄՆ դոլարով վարկեր չեն եղել (2014թ.՝ 25.44%):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թվով տասը վարկառուներին տրամադրված վարկերի գումարը կազմում է 56,413 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 6%-ը) (2014թ.՝ 39,935 հազար դրամ կամ 8%): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,170 հազար դրամ (2014թ.՝ 567 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	33,837	28,965
Շինարարություն	694	-
Կապ	12,872	8,182
Առողջապահություն	85	1,048
Առևտուր	211,780	253,529
Սպառողական	619,250	186,317
Այլ	28,857	20,371
	<b>907,375</b>	<b>498,412</b>
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	<b>(28,784)</b>	<b>(14,050)</b>
<b>Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>	<b>878,591</b>	<b>484,362</b>

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնավոր ձեռնարկություններ	17,827	17,753
Ֆիզիկական անձինք	619,251	186,317
Անհատ ձեռնարկատերեր	270,297	294,342
	<b>907,375</b>	<b>498,412</b>
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	<b>(28,784)</b>	<b>(14,050)</b>
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ</b>	<b>878,591</b>	<b>484,362</b>

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն իրենցից ներկայացնում են սպառողական վարկեր:

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2015			
	Մասնավոր ձեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ձեռնարկատերեր	Ընդամենը
<b>2015թ. հունվարի 1 դրությամբ</b>	1,654	2,617	9,779	14,050
Տարվա ծախս/(հակադարձում)	(1,832)	24,618	24,805	47,591
Դուրսգրում	(987)	(15,004)	(22,925)	(38,916)
Վերադարձ	1,561	1,596	2,902	6,059
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>396</b>	<b>13,827</b>	<b>14,561</b>	<b>28,784</b>
Անհատական արժեզրկում	-	2,549	7,174	9,723
հմբային արժեզրկում	396	11,278	7,387	19,061
	<b>396</b>	<b>13,827</b>	<b>14,561</b>	<b>28,784</b>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	2,549	7,337	9,886

  

Հազար ՀՀ դրամ	2014			
	Մասնավոր ձեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ձեռնարկատերեր	Ընդամենը
<b>2014թ. հունվարի 1 դրությամբ</b>	1,122	2,670	7,992	11,784
Տարվա ծախս	2,111	8,732	11,861	22,704
Դուրսգրում	(2,070)	(9,595)	(13,058)	(24,723)
Վերադարձ	491	810	2,984	4,285
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,654</b>	<b>2,617</b>	<b>9,779</b>	<b>14,050</b>
Անհատական արժեզրկում	1,180	1,694	6,122	8,996
հմբային արժեզրկում	474	923	3,657	5,054
	<b>1,654</b>	<b>2,617</b>	<b>9,779</b>	<b>14,050</b>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	1,180	1,794	7,861	10,835

Ինչպես նշված է 24 ծանոթագրությունում, 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը բացահայտված է 26 ծանոթագրությունում: Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային և տոկոսային ռիսկը բացահայտված է 27 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 23 ծանոթագրությունում:

## 15 Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնիկա	Գրասենյակային սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Ընդամենը
<b>ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ</b>				
<b>2014թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	8,884	12,246	6,470	27,600
Ավելացում	69	284	-	353
Օտարում	-	(13)	-	(13)
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	8,953	12,517	6,470	27,940
Ավելացում	46,267	12,889	-	59,156
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>55,220</b>	<b>25,406</b>	<b>6,470</b>	<b>87,096</b>
<b>ԿՈՒՏԱԿԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ</b>				
<b>2014թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	4,740	5,378	1,024	11,142
Հատկացումներ	1,732	2,210	648	4,590
Օտարում	-	(3)	-	(3)
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	6,472	7,585	1,672	15,729
Հատկացումներ	4,514	2,876	647	8,037
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>10,986</b>	<b>10,461</b>	<b>2,319</b>	<b>23,766</b>
<b>ՀԱՇՎԵԿՇՈԱՅԻՆ ԱՐԺԵՔ</b>				
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>44,234</b>	<b>14,945</b>	<b>4,151</b>	<b>63,330</b>
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,481	4,932	4,798	12,211
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	4,144	6,868	5,446	16,458

### Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 6,839 հազար դրամ (2014թ.՝ 3,106 հազար դրամ):

### Հիմնական միջոցների սահմանափակումներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ (2014թ.՝ ոչինչ):

## 16 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<b>ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ</b>			
<b>2014թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	5,100	1,165	6,265
Ավելացում	-	-	-
Օտարում	-	-	-
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	5,100	1,165	6,265
Ավելացում	-	<b>11,054</b>	<b>11,054</b>
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5,100</b>	<b>12,219</b>	<b>17,319</b>
<b>ԱՍՈՐՏԻԶԱՑԻԱ</b>			
<b>2014թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	2,178	139	2,317
Մասհանումներ	448	99	547
Օտարում	-	-	-
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	2,626	238	2,864
Մասհանումներ	<b>448</b>	<b>316</b>	<b>764</b>
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>3,074</b>	<b>554</b>	<b>3,628</b>
<b>ՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ԱՐԺԵՔ</b>			
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,026</b>	<b>11,665</b>	<b>13,691</b>
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,474	927	3,401
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,922	1,026	3,948

### Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ: (2014թ.՝ ոչինչ):

## 17 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացվելիք գումարներ	1,677	2,821
Արժեզրկումից պահուստներ	(5)	(63)
<b>Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ</b>	<b>1,672</b>	<b>2,758</b>
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	663	1,352
Չամորտիզացված ապահովագրավճարներ	1,162	213
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	1,060	765
Այլ ակտիվներ	935	1,006
<b>Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ</b>	<b>3,820</b>	<b>3,336</b>
<b>Ընդամենը այլ ակտիվներ</b>	<b>5,492</b>	<b>6,094</b>

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
<b>2014թ. հունվարի 1 դրությամբ</b>	19
Տարվա ծախս	1,209
Դուրսգրում	(1,165)
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	63
Տարվա ծախս	<b>1,566</b>
Դուրսգրում	<b>(2,016)</b>
Վերականգնում	<b>392</b>
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5</b>

### 18 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր բանկերից	-	38,415
Փոխառություններ այլ ֆինանսական կազմակերպություններից	691,655	-
<b>Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>691,655</b>	<b>38,415</b>

2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերից ստացված վարկերն ունեին փոփոխական տոկոսադրույք, և հաշվարկվում են վեցամսյա ԼԻԲՈՐ-ի հիման վրա:

Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներն իրենցից ներկայացնում են Կազմակերպության բաժնետիրոջից ստացված փոխառությունները, որոնք ունեն շուկայական տոկոսադրույք (տես ծանոթագրություն 23):

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 14.18% (2014թ.՝ 11.17%):

Հաշվետու ժամականաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

### 19 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ այլ ընկերություններից	-	25,718
<b>Ընդամենը փոխառություններ</b>	<b>-</b>	<b>25,718</b>

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 12.48%: Փոխառություններն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

## 20 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	22,541	2,892
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	629	149
<b>Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ</b>	<b>23,170</b>	<b>3,041</b>
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	9,315	1,777
Զօգտագործված արձակուրդների պահուստ	22,085	9,546
<b>Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ</b>	<b>31,400</b>	<b>11,323</b>
<b>Ընդամենը այլ պարտավորություններ</b>	<b>54,570</b>	<b>14,364</b>

## 21 Սեփական կապիտալ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության գրանցված կանոնադրական կապիտալը կազմում էր 420,000 հազար դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 210 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 2,000 հազար դրամ անվանական արժեքով:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնենասրվճարված կապիտալում	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնենասրվճարված կապիտալում
«4finance Holding S.A»	420,000	100	-	-
«Յոստին Փրոֆիթս Լիմիթեդ»	-	-	420,000	100
	<b>420,000</b>	<b>100</b>	<b>420,000</b>	<b>100</b>

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերն իրավունք ունի ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Կազմակերպության տարեկան և ընդհանուր ժողովներում:

Գլխավոր պահուստը ստեղծվել է համաձայն Կազմակերպության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Հատկացումները պահուստին կատարվում են շահույթից առնվազն 5%-ի չափով:

### 21.1 Լրացուցիչ կապիտալ

Նախկին բաժնետիրոջ կողմից տրամադրված փոխառության իրական և անվանական արժեքների տարբերությունը ճանաչվել էր կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Լրացուցիչ կապիտալի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2014թ. հունվարի 1 դրությամբ	-
Բաժնետիրոջ կողմից ստացված փոխառության իրական արժեքով ներկայացնելուց եկամուտ	26,172
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>20,938</b>
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>20,938</b>



## 22 Պայմանական պարտավորություններ

### Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Դեկլարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Դեկլարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Կազմակերպությանը ներկայացվող դատական հայցերի առումով Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

### Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – կազմակերպությունը որպես վարձակալող

Կազմակերպությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Մինչև 1 տարի	6,861	7,993
1-5 տարի	61,748	-
<b>Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով</b>	<b>68,609</b>	<b>7,993</b>

### Կապիտալ բնույթի պարտավորություններ

Կազմակերպությունը չունի կապիտալ բնույթի պարտավորություններ:

## 23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Կազմակերպության վերջնական վերահսկող է հանդիսանում 4Finance Group S.A-ը:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, փոխառություններ և այլն:

Գործարքների ծավալները, անվանական մնացորդները տարվա վերջի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և փոխկապացված անձինք	Ղեկավար անձնակազմը և փոխկապացված անձինք	Բաժնետերեր և փոխկապացված անձինք	Ղեկավար անձնակազմը և փոխկապացված անձինք
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>				
<b>Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ</b>				
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, համախառն	5,093	1,366	-	2,909
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	2,000	13,100	9,200
Տարվա ընթացքում մարված վարկեր	(5,093)	(3,118)	(8,007)	(10,743)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ	-	248	5,093	1,366
Ամորտիզացիա	-	-	(95)	10
Հաշվեգրված տոկոսների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	34	7
Արժեզրկումից պահուստ	-	(5)	(143)	(7)
<b>Ձուտ մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ</b>	<b>-</b>	<b>243</b>	<b>4,889</b>	<b>1,376</b>
<b>Փոխառություններ</b>				
Փոխառություններ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	51,000	-	41,756	-
Փոխառության ստացում	657,273	-	30,000	-
Փոխառության մարում	(51,000)	-	(20,756)	-
<b>Փոխառություններ 31 դեկտեմբերի դրությամբ</b>	<b>657,273</b>	<b>-</b>	<b>51,000</b>	<b>-</b>
Զեղչի գումար	-	-	(27,004)	-
Հաշվեգրված տոկոսների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	34,382	-	1,722	-
<b>Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ</b>	<b>691,655</b>	<b>-</b>	<b>25,718</b>	<b>-</b>
<b>Այլ պարտավորություններ</b>				
Այլ պարտավորություններ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում մուտքեր	24,907	-	-	-
Տարվա ընթացքում ելքեր	(10,386)	-	-	-
<b>Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ</b>	<b>14,521</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Հիմնական միջոցների ձեռքբերում</b>	<b>4,370</b>	<b>-</b>	<b>2,042</b>	<b>-</b>
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	-	199	843	1,270
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	33,409	-	3,588	-
Վարկային կորուստների գծով ծախս/(հակադարձում)	(143)	(2)	143	(47)
Վարձակալության գծով ծախսեր	-	-	1,950	-
Այլ ծախսեր	24,907	-	-	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Աշխատավարձ և պարգևավճարներ	86,882	43,014
<b>Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ</b>	<b>86,882</b>	<b>43,014</b>

## 24 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

### 24.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				Հաշվեկշռային արժեք
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեք	
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	70,385	-	70,385	70,385
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	878,591	-	878,591	878,591
Այլ ակտիվներ	-	1,672	-	1,672	1,672
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	691,655	-	691,655	691,655
Այլ պարտավորություններ	-	23,170	-	23,170	23,170

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	5,924	-	5,924	5,924
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	484,362	-	484,362	484,362
Այլ ակտիվներ	-	2,758	-	2,758	2,758
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	38,415	-	38,415	38,415
Փոխառություններ	-	25,718	-	25,718	25,718
Այլ պարտավորություններ	-	3,041	-	3,041	3,041

**Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և գեղջվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

**Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ**

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը մոտ է իրենց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք գեղջվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներն արատացում են նախկինում ստացված գործիքների տոկոսադրույքները: Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա:

**Փոխառություններ**

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք գեղջվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներն արտացոլում են նախկինում ստացված գործիքների տոկոսադրույքները:

**25 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցում**

Իր գործունեության ընթացքում Կազմակերպությունը ֆինանսական գործիքներով իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու

հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Կազմակերպությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են գուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի:

**26 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն**

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Կազմակերպության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 27.3-ում:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							Ընդամենը
	Ցպահանց և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարի և ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,385	-	-	70,385	-	-	-	70,385
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	51,980	201,944	65,505	319,429	559,162	-	559,162	878,591
Այլ ակտիվներ	1,672	-	-	1,672	-	-	-	1,672
	<u>124,037</u>	<u>201,944</u>	<u>65,505</u>	<u>391,486</u>	<u>559,162</u>	<u>-</u>	<u>559,162</u>	<u>950,648</u>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	214,424	477,231	691,655	-	-	-	691,655
Այլ պարտավորություններ	23,170	-	-	23,170	-	-	-	23,170
	<u>23,170</u>	<u>214,424</u>	<u>477,231</u>	<u>714,825</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>714,825</u>
<b>Զուտ դիրք</b>	<u>100,867</u>	<u>(12,480)</u>	<u>(411,726)</u>	<u>(323,339)</u>	<u>559,162</u>	<u>-</u>	<u>559,162</u>	<u>235,823</u>
<b>Կուտակված ճեղքվածք</b>	<u>100,867</u>	<u>88,387</u>	<u>(323,339)</u>		<u>235,823</u>	<u>235,823</u>		

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							Ընդամենը
	Ցպահանց և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարի և ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,924	-	-	5,924	-	-	-	5,924
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	45,756	87,298	257,593	390,647	93,715	-	93,715	484,362
Այլ ակտիվներ	2,758	-	-	2,758	-	-	-	2,758
	<u>54,438</u>	<u>87,298</u>	<u>257,593</u>	<u>399,329</u>	<u>93,715</u>	<u>-</u>	<u>93,715</u>	<u>493,044</u>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,682	8,870	24,863	38,415	-	-	-	38,415
Փոխառություններ	58	18,000	-	18,058	-	7,660	7,660	25,718
Այլ պարտավորություններ	3,041	-	-	3,041	-	-	-	3,041
	<u>7,781</u>	<u>26,870</u>	<u>24,863</u>	<u>59,514</u>	<u>-</u>	<u>7,660</u>	<u>7,660</u>	<u>67,174</u>
<b>Զուտ դիրք</b>	<u>46,657</u>	<u>60,428</u>	<u>232,730</u>	<u>339,815</u>	<u>93,715</u>	<u>(7,660)</u>	<u>86,055</u>	<u>425,870</u>
<b>Կուտակված ճեղքվածք</b>	<u>46,657</u>	<u>107,085</u>	<u>339,815</u>		<u>433,530</u>	<u>425,870</u>		

## 27 Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Կազմակերպության Ղեկավարության կողմից համաձայն խորհրդի կողմից հաստատած կանոնակարգերի: Ղեկավարությունը բացահայտում, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Կարևորագույն ռիսկերն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

### 27.1 Պարտքային ռիսկ

Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Կազմակերպությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Կազմակերպության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Կազմակերպությունն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Կազմակերպության պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Կազմակերպության ղեկավարությանը:

Կազմակերպության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներ:

#### 27.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

##### *Աշխարհագրական սեզմենտներ*

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պարտքային ռիսկերն ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

##### *Գործունեության ոլորտներ*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ գործունեության ոլորտների.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական կազմակերպություններ	Արդյունաբերություն	Շինարարություն	Տրանսպորտ և կապ	Առողջապահություն	Առևտուր	Սպառողական	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,385	-	-	-	-	-	-	-	70,385
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	32,991	674	12,511	83	198,916	605,351	28,065	878,591
Այլ ակտիվներ	1,669							3	1,672
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>72,054</b>	<b>32,991</b>	<b>674</b>	<b>12,511</b>	<b>83</b>	<b>198,916</b>	<b>605,351</b>	<b>28,068</b>	<b>950,648</b>
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,619	26,888	-	8,037	1,031	244,669	183,701	20,099	493,044

### 27.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և գսպողական քաղաքականություն

Կազմակերպությունը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկի գսպելու նպատակով սահմանվում են վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և գսպողական մի քանի այլ միջոցներ:

#### Գրավ

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը գսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Կազմակերպությունը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի գսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար ապահովության հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցները,
- Ֆիզիկական անձանց շարժական գույք
- Երաշխավորություններ

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Անշարժ գույք	33,851	4,226
Շարժական գույք	29,285	3,991
Շրջանառության մեջ գտվող ապրանքներ	89,891	214
Սարքավորումներ	23,882	10,730
Երաշխիքներ	700,123	396,805
Առանց գրավ	30,343	19,758
Այլ	-	62,688
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)</b>	<b>907,375</b>	<b>498,412</b>

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

**27.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն**

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Կազմակերպությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

*Արժեզրկման անհատական գնահատում*

Կազմակերպությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

*Արժեզրկման խմբային գնահատում*

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով, ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:



*Հարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ*

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		
Մասնավոր ձեռնարկություններ	2.22%	2.86%
Ֆիզիկական անձիք	1.83%	0.5%
Անհատ ձեռնարկատերեր	2.81%	1.28%

*Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր*

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ					2015
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
<b>Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>					
Մասնավոր ձեռնարկություններ	-	-	-	417	417
Ֆիզիկական անձիք	1,334	2,828	2,699	15,907	22,767
Անհատ ձեռնարկատերեր	1,976	-	1,046	7,661	10,683
<b>Ընդամենը</b>	<b>3,310</b>	<b>2,828</b>	<b>3,745</b>	<b>23,985</b>	<b>33,867</b>
Հազար ՀՀ դրամ					2014
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Մասնավոր ձեռնարկություններ	510	-	-	-	510
Ֆիզիկական անձիք	1,195	2,595	615	1,703	6,108
Անհատ ձեռնարկատերեր	2,541	1,244	1,352	6,964	12,101
<b>Ընդամենը</b>	<b>4,246</b>	<b>3,839</b>	<b>1,967</b>	<b>8,667</b>	<b>18,719</b>

*Անհատապես արժեզրկված վարկեր*

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության անհատապես արժեզրկված վարկերի գումարը կազմում է 17,111 հազար դրամ (2014թ.՝ 10,835 հազար դրամ):

**27.2 Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Կազմակերպությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել առևտրային պորտֆել (2014՝ նույնպես): Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

**27.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային**

*Տոկոսադրույթի ռիսկ*

Տոկոսադրույթի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույթների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Կազմակերպության համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույթների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույթներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույթով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: 2015<sup>Ա</sup>. դեկտեմբերի 31 տատանվող տոկոսադրույթով գործիքներ չեն եղել:

Վազար 33 դրամ	2014	
	Սրտարժույթ	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն
ԱՄՆ դոլար	0.5	71
ԱՄՆ դոլար	(0.5)	(71)

*Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Վազար 33 դրամ	2015		2014	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	5%	1,866	5%	(1,447)
ԱՄՆ դոլար	(5%)	(1,866)	(5%)	1,447
ԵՎՐՈ	5%	34,577	5%	-
ԵՎՐՈ	(5%)	(34,577)	(5%)	-

Կազմակերպության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,402	51,983	-	70,385
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	878,591	-	-	878,591
Այլ ակտիվներ	1,672	-	-	1,672
	<b>898,665</b>	<b>51,983</b>	<b>-</b>	<b>950,648</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	691,655	-	691,655
Այլ պարտավորություններ	8,633	14,537	-	23,170
	<b>8,633</b>	<b>706,192</b>	<b>-</b>	<b>714,825</b>
<b>Զուտ դիրք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>890,032</b>	<b>(654,209)</b>	<b>-</b>	<b>235,823</b>
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	483,549	9,495	-	493,044
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	28,743	38,431	-	67,174
Զուտ դիրք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	454,806	(28,936)	-	425,870

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները:

### 27.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով, սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները:

Կազմակերպության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը:

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 26-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Յպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

Հազար ՀՀ դրամ

2015

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	218,268	508,720	-	-	726,988
Այլ պարտավորություններ	344	34,366	-	22,084	-	56,794
<b>Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ՝ ըստ պայմանագրային տվյալների</b>	<b>344</b>	<b>252,634</b>	<b>508,720</b>	<b>22,084</b>	<b>-</b>	<b>783,782</b>

Հազար ՀՀ դրամ

2014

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,814	9,367	25,605	-	-	39,786
Փոխառություններ	190	18,346	-	-	66,032	84,568
Այլ պարտավորություններ	3,041	-	-	-	-	3,041
<b>Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ՝ ըստ պայմանագրային տվյալների</b>	<b>8,045</b>	<b>27,713</b>	<b>25,605</b>	<b>-</b>	<b>66,032</b>	<b>127,395</b>

**27.4 Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Կազմակերպության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Կազմակերպության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ: Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,

- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

## **28 Կապիտալի համարժեքություն**

2012թ. հունվարի 1-ից սկսած ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ 150,000 հազար դրամ գումարով:

Կազմակերպությունը պահպանում է կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար:

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Կազմակերպության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Կազմակերպությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և մասնակիցների շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը և ՀՀ ԿԲ կողմից սահմանված համապատասխան նվազեցումները:

Կազմակերպությունը պահպանում է նորմատիվային կապիտալի նվազագույն չափը:



**Grant Thornton**

[www.grantthornton.am](http://www.grantthornton.am)